## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԱՄԱՍԻԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ Ամասիա փ. 26, շենք 19
հեռ՝ (0246)_22310
հեռ՝ (0246)_22925
Ֆաքս՝ (0246)22310

30.10.2012թ.

ՀՀ Շիրակի մարզպետ

պարոն՝ Ա.Գիզիրյանին

Հարգելի պարոն Գիզիրյան

Ձեզ եմ ուղարկում Ամասիա համայնքի ավագանու 30 հոկտեմբերի 2012թ. նիստի թիվ 21, թիվ 22-Ն, թիվ 23 և թիվ 24-Ա որոշումները:

Առ դիր 4 /չորս/ թերթ:

Հարգանքներով՝

Ա. Ամիրյան

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 6890
31. 10 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱՄԱՍԻԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

30.հոկտեմբերի 2012թվական　　　　　　　　　　　　　　　　　　　　գ. Ամասիա

# ՈՐՈՇՈՒՄ 21

## «ՋԻԷՆՍԻ_ ԱԼՖԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի դրույթով Ամասիա համայնքի 26 փողոց, 19 օբյեկտ հասցեում գտնվող գյուղապետարանի վարչական շենքից վարձակալությամբ հատկացնել թիվ 1 սենյակ- 2.87քառակուսի մետր, թիվ 2 սենյակ- 3.1 քառակուսի մետր, թիվ 3 սենյակ -16.2 քառակուսի մետր տարածք, 5 տարի ժամկետով, ամսեկան 22.0հազար դրամ վարձավճարով «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական ընկերությանը սարքավորումներ տեղադրելու համար:

**Ավագանու անդամներ՝**

Ա. Խաչատրյան　　կողմ
Ա. Մկրտումյան　　կողմ
Ա. Քոչոյան　　կողմ
Ա. Սարգսյան　　կողմ
Ս. Մանուկյան　　կողմ

Ամասիա համայնքի ղեկավար՝　　　Ա. Ամիրյան

30.հոկտեմբերի 2012թվական
գ. Ամասիա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԱՄԱՍԻԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

30.հոկտեմբերի 2012թվական — գ. Ամասիա

## ՈՐՈՇՈՒՄ 22-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԹԻՎ 32- Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70- րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2011թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 32- Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները

Գործառնական և տնտեսագիտական դասակարգում

Եկամտային մաս՝

«Տող 1371, հոդված 7441» ավելացնել «3585.5հազար դրամ»

Ծախսային մաս՝

«Տող 3112, բաժին 11, խումբ 1, դաս 2, հոդված 4891» պակասեցնել «2170.0հազար դրամ»

«Տող 2111, բաժին 01, խումբ 1, դաս 1, հոդված 4212» ավելացնել «350.0հազար դրամ»

«Տող 2111, բաժին 01, խումբ 1, դաս 1, հոդված 4237» ավելացնել «150.0հազար դրամ»

«Տող 2111, բաժին 01, խումբ 1, դաս 1, հոդված 4232» ավելացնել «250.0հազար դրամ»

«Տող 2111, բաժին 01, խումբ 1, դաս 1, հոդված 4261» ավելացնել «180.0հազար դրամ»

«Տող 2461, բաժին 06, խումբ 4, դաս 1, հոդված 4269» ավելացնել «150.0հազար դրամ»

«Տող 2511, բաժին 05, խումբ 1, դաս 1, հոդված 4267» ավելացնել «100.0հազար դրամ»

«Տող 2821, բաժին 08, խումբ 2, դաս 1, հոդված 4511» ավելացնել «990.0հազար դրամ»

«Տող 2910, բաժին 09, խումբ 1, դաս 1, հոդված 4511» ավելացնել «3585.5հազար դրամ»

**Ավագանու անդամներ՝**

Ա. Խաչատրյան կողմ

Ա. Մկրտումյան կողմ

Ա. Քոչոյան կողմ

Ա. Սարգսյան կողմ

Ս. Մանուկյան կողմ

Ամասիա համայնքի ղեկավար՝ Ա. Ամիրյան

30.հոկտեմբերի 2012թվական
գ. Ամասիա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ**
**ԱՄԱՍԻԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

30.հոկտեմբերի 2012թվական գ. Ամասիա

# ՈՐՈՇՈՒՄ 23

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱՅԻ ՀԱՄԱՅՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՄԵԿ ՍԵՆՅԱԿԸ ՎԵՐԱՆՈՐՈԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթով

**Ավագանին որոշում է**

Համայնքի բյուջեից 990.0հազար դրամ հատկացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքային գրադարանի 28 քառակուսի մետր մակերեսով սենյակը վերանորոգելու համար:

**Ավագանու անդամներ՝**

Ա. Խաչատրյան կողմ
Ա. Մկրտումյան կողմ
Ա. Քոչոյան կողմ
Ա. Սարգսյան կողմ
Ս. Մանուկյան կողմ

Ամասիա համայնքի ղեկավար՝ Ա. Ամիրյան

30.հոկտեմբերի 2012թվական
գ. Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԱՄԱՍԻԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

30.հոկտեմբերի 2012թվական                                                                                   գ. Ամասիա

# ՈՐՈՇՈՒՄ 24-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 28-ի. նիստի «Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համար անհրաժեշտ շենքերի /տարածքների/, այդ թվում՝ միասնական ընդունարանների տեղակայման վայրերին և պայմաններին հավանություն տալու մասին» N 29 արձանագրային որոշումը

**Ավագանին որոշում է**

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն անհատույց օգտագործման իրավունքով, անժամկետ, տրամադրել Ամասիա համայնքի սեփականություն հանդիսացող, գյուղ Ամասիա, 26 փողոց, 19 շենք հասցեում գտնվող, Ամասիայի գյուղապետարանի վարչական շենքի առաջին հարկի 166.7 քառակուսի մետր և երրորդ հարկի 271.3 քառակուսի մետր տարածքները:
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար Ա. Ամիրյանին՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հետ կնքել տարածքի անհատույց օգտագործման անժամկետ պայմանագիր:

**Ավագանու անդամներ՝**

Ա. Խաչատրյան կողմ
Ա. Մկրտումյան կողմ
Ա. Քոչոյան կողմ
Ա. Սարգսյան կողմ
Ս. Մանուկյան կողմ

Ամասիա համայնքի ղեկավար՝ Ա. Ամիրյան

30.հոկտեմբերի 2012թվական
գ. Ամասիա